

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ**



Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**

Հաստատված է

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2021 թվականի դեկտեմբերի 2-ի նիստի թիվ 08/1 որոշմամբ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Սույն կանոնակարգը սահմանում է «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ **ՀԱՊՀ**) Կապանի մասնաճյուղի (այսուհետ՝ **Մասնաճյուղ**) Տեխնոլոգիական կենտրոնում (այսուհետ՝ **Կենտրոն**) դպրոցականների համար դասընթացների (**դասընթացներ**) կազմակերպման և իրականացման ընդհանուր դրույթները: **(1.1-ին կետը փոփ. 06.04.23 ԳԽՈ 09/3)**
- 1.2. **Կենտրոնում դասընթացները** կազմակերպվում և իրականացվում են համաձայն ՀՀ օրենսդրության, **Մասնաճյուղի** կանոնադրության և սույն կանոնակարգի:

- 1.3. **Դասընթացների** կազմակերպման նպատակն է աշակերտների (այսուհետ՝ **Ունկնդիրներ**) շրջանում տեղեկատվական տեխնոլոգիաների գիտելիքների խորացումը, դպրոցականների շրջանում ճարտարագիտական կրթության նկատմամբ մոտիվացիայի խթանումը:
- 1.4. **Դասընթացը** հաջողությամբ յուրացրած անձանց կարող է տրվել համապատասխան փաստաթուղթ:

2. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

- 2.1. **Դասընթացների** կազմակերպման և իրականացման գործընթացի վերահսկողությունն իրականացնում է **Մասնաճյուղի** տնօրենը:
- 2.2. **Դասընթացների** կազմակերպման և իրականացման աշխատանքները համակարգում է **Կենտրոնի** ղեկավարը:
(2.2-րդ կետը փոփ. 06.04.23 ԳԽՈ 09/3)
- 2.3. Որպես կանոն **Մասնաճյուղը Դասընթացները** կազմակերպում և իրականացնում է ինքնուրույն: **Մասնաճյուղը** կարող է կազմակերպել և իրականացնել **Դասընթացներ** նաև այլ կազմակերպությունների հետ համատեղ:
- 2.4. **Դասընթացներն** իրականացվում են խմբային ուսուցման միջոցով՝ առկա և հեռավար ձևերով: Թույլատրվում է նաև ուսուցման ձևերի զուգակցումը:
- 2.5. Խմբերը ձևավորվում են **Մասնաճյուղի** տնօրենի հրամանով: «Ինժեներական-էլեկտրատեխնիկական լաբորատորիա»-ում իրականացվող **Դասընթացների** դեպքում խմբում **Ունկնդիրների** թիվը սահմանվում է 6-8, իսկ մնացած դեպքերում՝ 10-12:
- 2.6. **Մասնաճյուղի** կանոնադրության և ներքին կարգապահության կանոնների, սույն կանոնակարգի և ՀՀ գործող օրենսդրության պահանջները չպահպանող **Ունկնդիրների** հետ ուսումնառությունը դադարեցվում է:
- 2.7. **Դասընթացներն** իրականացվում է համաձայն հաստատված **Դասընթացների** ժամանակացույցի, **Դասընթացի** ծրագրի և դասացուցակի:
- 2.8. **Դասընթացների** ծրագրերը հաստատվում են **Մասնաճյուղի** գիտական խորհրդի կողմից:
- 2.9. Այլ կազմակերպությունների կողմից ներկայացված **Դասընթացների** ծրագրերի դեպքում չի գործում 2.8. կետի պահանջը:
- 2.10. Մասնաճյուղի աշխատակից հանդիսացող դասընթացավարները ընտրվում են **Մասնաճյուղի** տնօրենի կողմից՝ **Կենտրոնի** ղեկավարի առաջարկությամբ՝ հաշվի առնելով **Դասընթացի** բովանդակությունը և պահանջները:
(2.10-րդ կետը փոփ. 06.04.23 ԳԽՈ 09/3)
- 2.11. **Դասընթացի** բովանդակությունից և պահանջներից ելնելով՝ անհրաժեշտության դեպքում **Մասնաճյուղի** տնօրենը կարող է հրավիրել նաև **Մասնաճյուղի** աշխատակից չհանդիսացող համապատասխան մասնագետի:
- 2.12. **Կենտրոնում Դասընթացների** պարապմունքներն իրականացվում են երկուշաբթիից ուրբաթ, իսկ անհրաժեշտության դեպքում երկուշաբթիից շաբաթ օրերին՝ ժամը 10:00-20:00 սահմաններում: Պարապմունքների համար 1 ակադեմիական ժամի տևողությունը սահմանվում է համաձայն **Մասնաճյուղում** ընդունված նորմի:

3. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

- 3.1. **Ունկնդիրների** համար **Դասընթացներն** անվճար են:
- 3.2. **Դասընթացների** կազմակերպման և իրականացման ծախսերը կատարելու համար **Մասնաճյուղը** կարող է ներգրավել օրենքով չարգելված արտաքին ֆինանսական աղբյուրներ:
- 3.3. **Դասընթացների** կազմակերպման և իրականացման ծախսերը կարող են կատարվել նաև **Մասնաճյուղի** արտաբյուջետային ֆինանսական միջոցների հաշվին՝ որպես Կենտրոնի ստեղծման համաներդրում:
- 3.4. **Մասնաճյուղի** կողմից վարձատրվելու դեպքում դասընթացավարի հետ կնքվում է «Ծառայությունների վճարովի մատուցման» քաղաքացիաիրավական պայմանագիր (այսուհետ՝ **Պայմանագիր**): Դասընթացավարի վարձատրությունն իրականացվում է համաձայն **Մասնաճյուղի** տնօրենի և դասընթացավարի կողմից ստորագրված համապատասխան հանձնման-ընդունման ակտի:
- 3.5. Դասընթացավարի վարձատրությունը 1 ակադեմիական ժամի համար չի կարող ցածր լինել **Մասնաճյուղում** դասախոսի համար սահմանված գումարից և բարձր լինել դոցենտի համար սահմանված գումարից: Համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում **Մասնաճյուղի** տնօրենի հրամանով կարող է սահմանվել դոցենտի համար սահմանված գումարից ավելի գումար:
- 3.6. **Դասընթացների** կազմակերպման և իրականացման արտաքին ֆինանսական աղբյուրների ներգրավման դեպքում **Մասնաճյուղի** տնօրենի հրամանով կարող են վարձատրվել նաև դասընթացների կազմակերպման, իրականացման և վերահսկման մասնակիցները:

4. ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ, ԴՊՐՈՑԻ, ԴԱՍԸՆԹԱՑԱՎԱՐՆԵՐԻ, ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 4.1. **Մասնաճյուղն իրավունք ունի.**
 - 4.1.1 ինքնուրույն իրականացնել ուսուցման գործընթացը,
 - 4.1.2 **Մասնաճյուղի** կանոնադրությամբ նախատեսված սահմաններում, ինչպես նաև **Մասնաճյուղի** ներքին իրավական ակտերին և ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան խրախուսել **Ունկնդիրներին** կամ նրանց նկատմամբ կիրառել համապատասխան տույժեր:
- 4.2. **Դպրոցն իրավունք ունի.**
 - 4.2.1 **Մասնաճյուղից** ստանալ տեղեկատվություն **Դասընթացների** իրականացման վերաբերյալ,
 - 4.2.2 ստանալ տեղեկատվություն **Ունկնդիրների** առաջադիմության, վարքի, ուսուցման նկատմամբ վերաբերմունքի վերաբերյալ:
- 4.3. **Դասընթացավարներն իրավունք ունեն.**
 - 4.3.1. **Դասընթացը** վարելու համար ունենալ անհրաժեշտ կազմակերպական և նյութատեխնիկական պայմաններ,
 - 4.3.2. ընտրելու ուսուցման այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք ապահովում են **Դասընթացների** անցկացման բարձր որակ,

- 4.3.3. օգտվել **Մասնաճյուղի** կանոնադրությամբ և ներքին կարգապահության կանոններով, **Պայմանագրով** սահմանված իրավունքներից:
- 4.4. **Ունկնդիրներն** իրավունք ունեն.
- 4.4.1. ծանոթանալ **Դասընթացի** իրականացման պայմաններին,
- 4.4.2. օգտվել **Մասնաճյուղի** կանոնադրությամբ և ներքին կարգապահության կանոններով սահմանված այլ իրավունքներից:
- 4.5. **Մասնաճյուղը** պարտավոր է.
- 4.5.1. կազմակերպել **Ունկնդիրների** ուսուցումը համաձայն **Մասնաճյուղի** գիտական խորհրդի կողմից հաստատված **Դասընթացի** ծրագրի,
- 4.5.2. կազմակերպել և ապահովել ուսուցման պատշաճ իրականացումը:
- 4.6. **Դպրոցը** պարտավոր է.
- 4.6.1. ժամանակին ներկայացնել **Ունկնդիրների** վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը,
- 4.6.2. ապահովել **Ունկնդիրների** հաճախումը **Դասընթացների** պարապմունքներին, **Ունկնդիրների** կողմից **Մասնաճյուղի** կանոնադրության և ներքին կարգապահության կանոնների պահանջների կատարումը,
- 4.6.3. **Մասնաճյուղին** տեղեկացնել **Ունկնդիրների** հարգելի բացակայության պատճառների մասին:
- 4.7. **Դասընթացավարները** պարտավոր են.
- 4.7.1. **Դասընթացն** իրականացնել համաձայն **Մասնաճյուղի** կողմից ներկայացված **Դասընթացների** ժամանակացույցի, **Դասընթացի** դասացուցակի և ծրագրի,
- 4.7.2. ապահովել **Ունկնդիրների** կողմից **Մասնաճյուղի** կանոնադրության և ներքին կարգապահության կանոնների պահանջների կատարումը,
- 4.7.3. ժամանակին տեղեկացնել **Դասընթացի** պարապմունքներից **Ունկնդիրների** բացակայությունների մասին,
- 4.7.4. պատշաճ վարել աշխատանքային փաստաթղթերը,
- 4.7.5. պահպանել **Մասնաճյուղի** ներքին կարգապահության կանոնները, կատարել **Պայմանագրով** սահմանված պարտականությունները:
- 4.8. **Ունկնդիրները** պարտավոր են.
- 4.8.1. հաճախել **Դասընթացի** պարապմունքներին,
- 4.8.2. սահմանված ժամկետներում կատարել **Դասընթացների** յուրացման համար տրված բոլոր հանձնարարությունները,
- 4.8.3. պահպանել **Մասնաճյուղի** կանոնադրության, ներքին կարգապահության կանոնների և այլ ներքին իրավական ակտերի պահանջները,
- 4.8.4. խնամքով վերաբերվել **Մասնաճյուղի** գույքին, ՀՀ օրենսդրությանը համապատասխան փոխհատուցել **Մասնաճյուղի** գույքին պատճառած վնասը:

5. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 5.1. Սույն կանոնակարգը հաստատվում, փոփոխվում կամ լրացվում է **Մասնաճյուղի** գիտական խորհրդի որոշմամբ և կիրարկվում է **Մասնաճյուղի** տնօրենի հրամանով: